ՀԱՅ-ԱԼՄԱՍՏ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ.+374 77 250250
Էլ.փոստ: tigrankhachatryan@hayalmast.com

«27» փետրվարի 2024թ

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

/ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ, 93-93/1 փարածք,
հեռ.՝ +374 60 50 57 57, էլեկտրոնային հասցե՝ info@regoinsurance.am/

Հարգելի պարոն ՄԿՐՏՉՅԱՆ

«Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ի կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 22-ին հայտարարված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն, որի հետ 30.01.2024թ-ին կնքվել է ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ-1 ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի շրջանակում, Ձեր կողմից էլեկտրոնային եղանակով սույն թվականի հունվարի 31-ին «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ին ներկայացվել է թիվ No PR056193 Գույքի ապահովագրության վկայագիրը (այսուհետ՝ Վկայագիր) և «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից հաստատված «Իրավաբանական անձանց պատկանող գույքի բոլոր ռիսկերից ապահովագրության պայմանները» (այսուհետ՝ Պայմաններ), սակայն Վկայագրով սահմանված էին այլ, ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ-1 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) չնախատեսված պայմաններ, մասնավորապես Ագրեգատային ապահովագրական գումար՝ 1 տոկոսի չափով, ինչի մասին Պայմանագրով սահմանված չի եղել, ավելին «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում հրապարակված Պայմանների 12.2.-րդ կետի համաձայն՝ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհուրդը, որպես ընդհանուր պայման հաստատել է, որ Ապահովագրական հատուցման չափը որոշվում և սահմանվում է պատճառված վնասի մեծությամբ, բայց չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման չափը): Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը իրականացվում է նվազեցնելով Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող գումարը, եթե այդպիսին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է: Այսինքն, հարկ ենք համարում նշել, որ Պայմանագրով հստակ նշված է եղել

գույքի իրական արժեքը՝ 1,442,807,053.8 ՀՀ դրամ, որը ներկայացվել է թե Ընթացակարգով, թե Պայմանագրով, որպես ապահովագրական հատուցման չափ, որի հետ համաձայնվել է «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն: Համաձայն Պայմանագրի 1.1 կետի դրույթների պայմանագրի առարկա է հանդիսանում պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով ներկայացված ծառայությունների մատուցումը, որտեղ հստակ նշված են ապահովագրական գումարի չափը և կոնկրետ ռիսկերը, որոնցից անհրաժեշտ է ապահովագրել ապրանքը: Բացի այդ նշված պայմանագրի 2.4.1 կետի համաձայն Կատարողը պարտավոր է ապահովել ծառայությունների մատուցումը համաձայն վերոնշյալ Հավելված N1-ով սահմանված պայմանների և ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ: Իսկ պայմանագրի 5.1 կետի համաձայն Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման պայմանագրի պահանջների պահպանման համար, իսկ պայմանագրում և Հավելված N1-ում բացակայում է նշում՝ չհատուցվող գումարի կամ առանձին ռիսկերի համար այլ սակագին կիրառելու հնարավորության մասին: Ինչ վերաբերվում է «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից Վկայագրում «Ժողովրդական հուզումներ և գործադուլներ ռիսկի» գծով ընդամենը 5,000,000 ՀՀ դրամ ապահովագրական հատուցման գումար նախատեսելուն, ապա նշենք, որ Ձեր կողմից ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարման փուլից ի վեր երբևէ չի մատնանշվել սույն ռիսկի գծով այլ սակագին ունենալու կամ հավելյալ պայման տրամադրելու հնարավորության փաստը: Մասնավորապես, ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր» բաժնում, որպես գնման առարկա նշվել է «Բոլոր ռիսկերից ապահովագրում» պահանջը, ինչի վերաբերյալ հաշվի են առնվել Ձեր կողմից ներկայացված հարցում-տեղեկատվությունը առ այն, որ «Երկրաշարժ» ռիսկից ապահովագրման համար «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ում սահմանված են այլ պայմաններ և սակագներ, ինչի վերաբերյալ էլ «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն նշել է, որ նշված ռիսկը Վկայագրում չնշելուն համաձայն է:

Այսինքն, ամփոփելով վերոգրյալը, փաստում ենք, որ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է համաձայնելով սահմանված պայմաններին և հաղթել է ներկայացնելով նշված պայմանների համար՝ նվազագույն գին և կնքել Պայմանագիր, սակայն իրականում չի կարողանում ապահովել իր կողմից նշված գնով Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը՝ ծառայությունների մատուցումը, խոչնդոտելով «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ի բնականոն գործունեությանը:

Վերոնշյալ խնդիրների մասով բազմիցս՝ էլեկտրոնային փոստով նամակագրության միջոցով տեղեկացրել ենք Ձեզ և առաջարկել ենք կարարել կնքված թիվ ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ-1 պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից քայլեր չեն ձեռնարկվել նշյալ թերությունները վերացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն գրությամբ առարկություններ է ներկայացրել և հրաժարվել մատնանշված խնդիրներների ու թերությունների շտկման վերաբերյալ, հայտնում ենք, որ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հետ կնքված ԳՀԾՁԲ-23/2-ՀԱ-1 պայմանագիրը

27.02.2024թ-ից միակողմանի լուծվել է, պահպանելով Պայմանագրի «2.1.3» կետով սահմանված պահանջները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ս.թ. մարտի 7-ը ներառյալ, ապահովել Պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրով սահմանված հատուցումը՝ որակավորման ապահովման մասով՝ 541,053.00 (հինգ հարյուր քառասունմեկ հազար հիսուներեք) ՀՀ դրամի չափով, իսկ պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 360,702.00 (երեք հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամի չափով, գումարները փոխանցելով «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ի 19300707151000 («Կոնվերս Բանկ» ԲԲԸ) հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

«Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ